յարձակեցին Խան–Դերբէնի վրա: Այս կէտի պաշտպանութիւնը յանձնուեց Դրօին, որ այդ օրերին Սարըղամիշ էր եկել: Սկսուեց արիւնահեղ ճակատամարտների մի շարք, որ տևեց մի քանի օր: Մարտ 23–ին, կարսից կարևորու վտանգի տակ, գօր. Արեշեանը տուեց նահանջի հրաման, և մարտ 23 լոյս 24–ի գիշերը հայկական գօրքերը պարպեցին Սարըղամիշը՝ նախօրօք պայթեցնելով, այրելով ու փշացնելով պահեստներն ու ռազմական նշանակութիւն ունեցող կէտերը:

Սարըղամիշի անկումով՝ մաքրուեց և Ալաշկերտի հովիտը: Հայկական գօրքեր մնացին միայն Վանում, որոնք մինչև ապրիլի կէսերը չարունակեցին պաշտպանել թիւրքերի դէմ և ապա, կռուով, նահանջեցին դէպի Պարսկաստան: Նահանջի ճանապարհին սպանուեց կոստեա Համբարձումեանը՝ Պարոն Կոստին, ժողովրդական գաղափարական գործիչներից մէկը:

